ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ*

ՀՏԴ 821.19

Հովհաննիսյան Նարինե
բ. գ. թ., դոցենտ
Արցախի պետական համալսարան
ք.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն
nare-luys@mail.ru

Հոդվածում ուսումնասիրությունը կատարված է երկու հիմնական ուղղվածությամբ՝ տարագիր հոգու անծրար նամակներ՝ հասցեագրված աշխարհի չորս կողմին, և պոեզիայի մարգարեությունը կամ հայրենիքի ճակատագրի քրմուհին: Հայաստանը՝ որպես պատմաշխարհ և հոգեաշխարհ, աշխարհաքաղաքական կոխան ու քրիստոնյա ճակատագիր, խռովք՝ ընդդեմ ժամանակի և ժամանակի երկփեղկված զոհ, ոգու փրկության վերջին կայան, Թամար Հովհաննիսյանի պոեզիայում կերպավորվում է նոր հատկանիշներով ու նորովի ընկալումներով: Հովհաննիսյանի պոեզիայում մարդու և հայրենիքի ոգեղեն ու օրգանական կապի, հոգևոր պատմության մեջ տեսլացող Հայաստանի պատմահոգեբանական պատկերին զուգահեռ տիրականորեն առաջ են մղվում նաև նրա ներկա օրը, սպառնալիքներով ծանրացող գոյաբանական ընթացքը, զինաթափությունը լինելության մաքառումներում: Թ. Հովհաննիսյանի պոեզիան Հայատանի պատմահոգեբանության և գալիքի մարգարեության գիրքն է՝ օծված աստվածային շնորհով:

Բանալի բառեր՝ *Հայաստան, պատմահոգեբանություն, մարդ-հայրենիք միագոյություն, մարգարեություն, աշխարհաքաղաքականություն, քրիստոնյա ճակատագիր, կորուստներ, անհետացման սպառնալիք:*

Նախաբան

Հայաստանը՝ որպես պատմաշխարհ և հոգեաշխարհ, աշխարհաքաղաքական կոխան ու քրիստոնյա ճակատագիր, խռովք՝ ընդդեմ ժամանակի և ժամանակի երկփեղկված զոհ, ոգու փրկության վերջին կայան, ժամանակակից բանաստեղծ Թամար Հովհաննիսյանի պոեզիայում կերպավորվում է նոր հատկանիշներով ու նորովի ընկալումներով: Դա տարիքի հետ հասունացած և իմաստնացած սեր է, հեռուներից վերահիմաստավորված բարձրագույն արժեք, երկրներով անցած ու ներքին համեմատականներով աներկրորդություն վերարժևորված սրբություն: Դա սիրո ու ցավի թախծամրմունջ երգ է, հոգին հայրենիքում թողած ու մարմինը որպես բեռ աշխարհի մյուս ծայր տեղա-

*Հոդվածը ներկայացվել է 10.03.2023:
Տպագրության է երաշխավորել բ.գ.դ.,պրոֆեսոր Ս. Աղաջանյանը:17.03.2023:
Հոդվածը տպագրության է ընդունվել 24.03.2023:

փոխած բանաստեղծ էակի «ի խորոց սրտի խոսքը» ընդ երկրի, որ բյուրեղանում ու որպես անծրար նամակներ տարածվում է օվկիանոսից օվկիանոս՝ ցրելով բանաստեղծական հոգու ուղերձներն առ Հայաստան.

Երկիրն իմ ասք է չգրված՝
Ժայռերի ըմբոստ ճակատին…
Երկիրն իմ նուռ է ճեղքված,
Քմահաճ քիմքին ժամանակի,
Տեսիլք է՝ խռով երկնքից
Փրկության նավի հայտնություն…
Երկիրն իմ խաչ է՝ մյուռոնով օծյալ՝
Աշխարհի անհավատ ճակատին…[1]

Բանաստեղծությունն ասես հեթանոսական ծիսակատարության ասք լինի, և քնարական հերոսուհին՝ որպես նորօրյա քրմուհի, փառաբանություն է վերառաքում վասն Հայաստանի՝ առ տիեզերքի չորս կողմեր:

1. Տարագիր հոգու անծրար նամակներ՝ հասցեագրված աշխարհի չորս կողմին:

Ի տարբերություն հայ դասական հայրենասիրական պոեզիայի՝ Թամար Հովհաննիսյանի հայրենասիրական պոեզիայում քնարական հերոսուհին հիմնականում ոչ թե երկրորդ դեմքով երկխոսության մեջ է մտնում հայրենիքի հետ, այլ՝ պատմում, զրուցում է նրա մասին, այլ կերպ ասած, հայրենիքը Հովհաննիսյանի պոեզիայում գերազանցապես երրորդ դեմքն է, բանաստեղծուհին ոչ թե անմիջական զրուցակից է, այլ՝ քնարական պատմիչ: Չկա առարկայական անմիջական կապը, աներևույթ է մարմինների էներգիայի ոգեշունչ ներթափանցումը, այդ կապը ոգեկան է՝ ժամանակային ու տարածական որոշակի խզվածքներով ու ճեղքերով, որոնք, սակայն, երբեք անջրպետ չեն դառնում: Այստեղից նաև՝ Հովհաննիսյանի պատմահայրենասիրական բանաստեղծությունների ասքային եղանակը.

Հայրենիքն իմ բարոյական և իմացական
Իդեալների ծննդավայրն է,
Ես նրան վստահում եմ առանց
Տագնապների և մտավախության,
Պահ եմ տալիս նրան վերագտնումիս
Ու ինքնափրկությանս
Խաղաքարտերը վերջին,
Ու անշունչ լինելության պարապը
Չհիմնավորված տիեզերական դեգերումների
Ամաչեցնում է ինձ հանկարծ՝
Դասալիք զինվորի անպատվությամբ համակած:
Երբ դատարկվում է երկիրս,
Ես երկինք եմ պարապ՝
Թևավորներն իր վաղուց չված,

[1]Թ. Հովհաննիսյան, Լինելության համանվագ, Երևան, 2013, ՀԳՄ հրատ., էջ 335: Այսուհետ այդ գրքից մեջբերումների հղումները կտրվեն տեքստում՝ փակագծերում նշելով գրքի վերնագրի սկզբնատառերը և էջը:

Ու ներքին տագնապներն անասելի
Սիազանգում են հիշողության հավաքական մահը
Ինձ ստեղծած ննջեցյալների….[1]

Կա մեղքի ու ինքնախարազանումի զգացումը, որ հայրենիքի պարպումը նաև իրենով է կայանում, որ ինքն էլ նրան թողլքած մի մասնիկն է: Առկա է նաև խոստովանության պահը՝ ինքնալլկումով՝ երկիրն իրենով չլցնելու, երկիրը իր ներկայությամբ կենդանի չպահելու, գոյության խրամատը լքելու համար:

Բանաստեղծուհին կիսված էություն է, ինչպես իր հայրենիքը, մարմինը՝ մի ափին, հոգին՝ մյուս, օվկիանոսից այն կողմ հորիզոնի պես ձգվող հեռու հայրենիքում: Կա ամենօրյա տագնապի աղոթքը՝ հիշողությունը չկորցնելու՝ որտեղից է եկել ինքը: Քնարական հերոսուհու երկփեղկված էությունն անընդհատ ձգտում է նախկին վերամբողջացմանը՝ միաժամանակ ներքուստ զգալով, որ դա խաբկանք է, տեսիլ, որ չի կայանա վերջնական դարձը, հաճախակի այցելությունները նույնպես չեն վիրակապի ճեղքվածքը, որ բաց վերքի պես մնում է իր ու հայրենիքի միջև: Ինչքան էլ հեռուներն ապահովություն խոստանան, միևնույն է, կա կյանքի երաշտը, հոգու պարապը, որ կարող է լցվել միայն հայրենիքում.

Հայրենիքը հեռվից ապրեցնող տեսիլք է,
Գոյություն է, ոգեղենություն է չշոշափված,
Երազ է, որ միշտ քեզ հետ է,
Մանկության խմբանկար է՝ չերևակված,
Որի երևակումով վերամբոջանալու եմ ես[2]*:*

Այս բանաստեղծական տողերում էլ բացակա է անմիջական ներշնչումը, քանի որ առկա չէ անմիջական կապը: Այդպես ոգիների ներթափանցումն է չքանում մարմինների երկարատև տարանջատումից. «Երկրից հեռու երգ հյուսելը// Բեղմնավորում է առանց սերմի, // Հողից դուրս հանված ծաղկաթմբի պես….»[3] *:*

Թամար Հովհաննիսյանի պատմահոգեբանական բանաստեղծությունների մի մասը, հիրավի, թողնում է չափածո նամակների տպավորություն: Ոճն ազատ է, անկաշկանդ ու անհանգ, ռիթմն առավելապես վիպական է, քան՝ քնարական:

Իր անտիպ նամակներից մեկում բանաստեղծուհին գրում է. «Օտարությունը աքսոր է, այն աքսոր է ազատության մեջ, որն ընդամենը գնովի պատրանք է»: Օտարության մեջ հոգու ներդաշնակության ափ չգտնող բանաստեղծի համար որպես դյութական հովիտ, որպես իր շուրջը ձգող մագնիսական դաշտ՝ տարածվում է հայրենի երկրի հեռակա պատկերը, ինչպես փոթորկուն օվկիանոսին մատնված հոգուն հեռվից ժպտացող լույսի փարոս: Հայրենի երկրի ոգեղեն ներկայությունը՝ կեսգիշերին քնարական հերոսին համակած սառնությունը ջերմության փոխակերպող ու հարազատորեն զգվող տեսիլ է.

Հայրենի՛ք, ա՛րև իմ ինձանից հեռու,
Ձերմացրու՛ կարոտս ու մնա երկնքում,
Սիրտս լուսավորվում է քեզ մտաբերելիս,

---

[1]Թ. Հովհաննիսյան, Տարիքի հոգին, Երևան, 2018, «Անտարես» հրատ., էջ 383:
[2]Նույն տեղում, էջ 383:
[3]Նույն տեղում, էջ 384:

Քեզ վերհիշելիս գիշերով,
Երբ միակ ժպտացողն ինձ
Անսիրտ լուսինն է վերևից[1]:

Սա այն բացառիկ պահերից է, երբ քնարական հերոսուհին ստացական հոդով ու երկրորդ դեմքով է խոսում հայրենիքի հետ, երբ բանաստեղծուհու զրույցը հայրենիքի հետ ծավալվում է դեմ առ դեմ, մտերմաբար:

Աքսորական կամ ինքնաքսորված հոգու հողեղեն կարոտի մի այլ պատկեր է «Հողի հիշողությունը» բանաստեղծությունը, կարոտացավի մակընթացության որերորդ տեղատվություններից մեկը: Հողի հիշողությունն օտարության մեջ «Մտերմացնում է կորչող ես-դ քեզ», հիշեցնում «….Որ դու ուրիշ խմորից // Ուրիշ մի սիրուց ես սերված».

Հիշողությունը հողի կարոտի ճամփա է՝
Կիսագնդից կիսագունդ կամրջված,
Հիշեցումներ է անում սիրելի
Ու հետո սրբում աչքդ թաց:
Հիշողությունը հողի սեր է վերայցելված,
Որը հրդեհում է մարմնիդ խորշերը սառցե,
Դու նրան հանձնվում ես ջահել հարսի պես,
Ու պտուղներ են երգի ներարկվում քեզ….[2]:

Թամար Հովհաննիսյանի ստեղծածը հասուն հայրենասիրության պոեզիա է, տարիք առած և իմաստնացած սիրո պոեզիա, որ կյանքի ճանապարհին համընթաց փիլիսոփայական նոր խորքեր է ընդգրկում, պատկերային նոր գյուտեր հայտածում: Դա մարդ-հայրենիք միագոյության պոեզիա է, միագոյություն, որի երկփեղկումն ու տարանջատումը հանգեցնում է որոնումների՝ գլխապտույտ հարուցող մի շրջապտույտի, և ինքնախաղաղումը միայն վերամբողջացումն է. «Ես քեզ որոնում եմ քեզանից դուրս, // Դու որոնում ես ուրվականն իմ….»[3] :

Նույն հասուն և իմաստնացած սիրո մի այլ դրսևորում է «Ընկերոջս» բանաստեղծությունը: Պատկերային բացառիկ համակարգով, խոհի արժեկշռով, էմոցիոնալ զսպված խորությամբ այն կարող է դասվել Հայաստանին նվիրված պոեզիայի լավագույն շարքում: Արևմուտքի բարձրաշխարհիկ մտածողությունն ու արևելքի տաք հուզականությունը միախառնվել են այստեղ՝ ստեղծելով բանաստեղծական հրաշալի մի պատկեր: Այստեղ գունապատկերային նոր մանրամասներով է վերահաստատվում մարդ-հայրենիք միագոյության փիլիսոփայական խոհը: Հայրենիքը հյուլե առ հյուլե ներծծված է մարդու հողեղեն էության բջիջների մեջ, մեկի գոյավիճակը պայմանավորում է մյուսինը, մեկի տարանջատումը մյուսի կիսատությունն է: Անհայրենիք գոյությունը մարմինը դարձնում է սոսկ տարա, որի հոգին իրենից դուրս խարխափում, անիմաստ չափչփում է աշխարհի փողոցներում: Ու գոյության վերահմաստավորումը վերամիավորումն է հայրենիքի ու մարդու, ինչպես կտրված ու չորացող ծառի վերընձյուղումը արմատներին հանգուցվելուց հետո.

Ես գիտեմ հիմա, թե ինչու

---

[1]Նույն տեղում, էջ 385:
[2]Նույն տեղում, էջ 389:
[3]Նույն տեղում էջ 394:

Դու չես կարող փակել դուռն ու հեռանալ
Այդ ցավատանջ, ցամաք, ծերացած հողից:
Ամեն-ամեն բան արդեն պարզ է ինձ.
Հողն այդ ապրում է բջիջներիդ մեջ….[1]:

Շարունակվում են հայրենիք-մարդ երկվորյակային կապվածության խոհապատկերները՝ իմաստային նոր դրսևորումներով ու կենսափիլիսոփայական նոր ածանցումներով: Հայրենիք-մարդ միագոյությունը դառնում է փոխադարձ երկգոյություն, փոխանակումներ չպետք է լինեն, ինչպես ծնող և զավակ կապն է անփոխելի, ինչպես ծնողն է անփոխարինելի: Միաժամանակ հռչակվում է զավակի բարոյական պատասխանատվությունը՝ ծնող-հայրենիք երկբևեռ միասնության առաջ.

Հողն այս ուղեկիցն է ճակատագրիդ:
Ուխտագնացի պես ոտաբոբիկ ու խեղճ
Եվ ազնվության դրոշմ ճակատին,
Հողն ու դու ապրում եք տիեզերական մտերմության մեջ:
Այն, ինչ սպանում է, ապրեցնում է նաև,
Լավն ու վատը քոնն է, դու որդին ես նրա,
Որ չի կարող լքել ծնողին իր ծեր:
Ծնողը երևի սրբությունն է արյան,
Որին չի լինի փոխանակել կամ օտարել[2]:

Բանաստեղծությունն ընծայագրված է նկարիչ ընկերոջը, ով իր կտավի վրա Հայաստանի բախտն է պայծառակերպում՝ վրձնահարվածներից առաջ թաթախելով վրձինը «Արագածի ձյուներին», ում կտավները ճակատագիրը հայոց՝ Աստծո անավարտ հեքիաթ, կերպագծում են հեքիաթային վերջաբանով.

Մինչ դու վրձինդ թաթախած Արագածի ձյուներին
Նկարում ես սրբերին քո ապավինած,
Ու ծանր օրերի դրվագները ցավոտ
Տարրալուծվում են գույներիդ քնքշության հալոցքում
Ու դառնում նոր դրախտ՝ դռները մշտաբաց,
Ճմեռները դաժան գարուններ դարձրած,
Աստծո հետ տված ձեռք ձեռքի՝
Դու որոնում ես ճակատագիր մի նոր
Ու վերընծայում այն քո պաշտած երկրին.
Երկիրդ կտավն է քո, ու այն ձգել է Աստված
Ու քեզ է թողել գործն իր չավարտված…[3]:

Հայաստանի պատմահոգեբանական կերպավորումը Թ. Հովհաննիսյանի բանաստեղծական աշխարհում մանրամասնվում է նաև այնտեղ ապրող մարդկանց դիմապատկերայնությամբ, մարդիկ, որոնք այս կամ այն չափով ամբողջացնում են ժողովրդի ազգային դիմագիծը: Այդպիսի բանաստեղծություններից է «Իմ երկրի այրերը»: Հայաստանին վիճակված պարտությունների ու ողբերգությունների՝ նախօրինակի արժեք

[1]Նույն տեղում էջ 395:
[2]Նույն տեղում էջ 395:
[3]Նույն տեղում:

ունեցող պատկերների ֆոնին կերպագծվում են երկրի այրերը՝ «Թագը կորցրած արքաներ հպարտ», որ «Ինքնակամ ապրում են ասես մահվան մեջ // Կամ մեռնում են ապրելու համար».

Տրտմություն կա մի վեհ,
Ցավախառն խստություն՝
Խզբզված թանձրությամբ հոնքերի:
Սև հովազն է ասես առել կերպարանք՝
Հպարտ ու վիրավոր երկոտն արու:
Իմ երկրի այրերը, թիվն իրենց սակավ,
Անելիք որոնող, մտահոգ, հոգսաշատ,
Իրար ատում են խենթի պես
Կամ զոհվում հանուն իրար: [ՏՀ, 390]

Այս և ուրիշ բանաստեղծական պատկերներում անդրադարձվում են նաև երկրի այրերի ուժը ջլատող պարապության դատապարտվածությունը, անգործ ու հոգսաշատ առօրյան:

Հայաստանի երգերը Թ. Հովհաննիսյանի պոեզիայում հիմնականում ամփոփված են «Տարիքի հոգին» գրքի «Ապրեցնող տեսիլք» շարքում: Հիրավի, ապրեցնող տեսիլք՝ օտարության լայն ու նոր, բայց անհայացք ու դատարկ փողոցներում, ապահով, բայց տարաշխարհիկ միջավայրում: Ապրեցնող տեսիլքի գաղափարը վերահաստատվում ու ամրագրվում է տողից տող, բանաստեղծությունից բանաստեղծություն.

Քեզանից հեռու, երկիր իմ,
Խոհերս այցելում են օտարահունչ դողանջով,
Սիրտս փոխակերպիչ է՝ նոր դերի վարժված,
Որը վերհազցնում է խոհերն իմ հայկական տարազով:
Մտապատկերիս կտավին ճերմակ
Երկայն արահետ է ձգվում խոհերի,
Ես լարախաղաց եմ կիսագնդերի վրա,
Երկփեղկվում եմ հաճախ այս երերոցում…. [1]

Հոգևոր երերումները դրսևորվում են նաև լեզվական «թերացումներով»՝ «Մոռացված բառեր պարտքով վերցրած», ու դարձդարձիկ վերագտնումներով՝ «Ես բառերի կռիվն եմ արձանագրում հաճախ»[2]*:*

Անընդհատ հոգևոր դարձ դեպի ծննդավայր, անընդհատական ներքին մի հայացք՝ ուղղված հայրենիքին ու անցյալին, և դա այնքան ժամանակ, մինչև կայանա վերամբողջացումը: Ինչքան էլ մարմինը «քարշ գա» մեծ աշխարհի պողոտաներում, այնուամենայնիվ, հոգին կառչած է մնում հին կայանատեղին՝ ծննդավայրին.

Երկիրն իմ, որ թողեցի թիկունքում,
Կանչում է, ձայնում է ինձ երազներիս մեջ,
Այնտեղ ես ինձ այնքան ջահել եմ զգում,
Որ անցյալն ու ներկան տեղերը փոխած
Շփոթեցնում են երբեմն երևույթս հեգ….

---

[1]Նույն տեղում էջ 398:
[2]Նույն տեղում:

Սիրելիներն իմ գրկաբաց ժպտում են հեռվից,
Խմբապատկեր՝ ներծծված երկնի կտավի մեջ….[1]

Վերհուշն իր մեջ ներառում է ժամանակային ինքնատիրապետումը կորցրած կարոտյալ հոգուն, ու կյանքի ճանապարհի կծիկը՝ ձեռքից բաց թողնված, ետ սահում է տունդարձի հետքերով: Իսկ ծննդավայրը միայն հայրենական հողը չէ, այնտեղ ծանոթ ու թանկ հուշերն են, յուրայինները, նախնիների հրաշապատում ասքերը՝ երեկոները սեղանի շուրջ համախումբ պարպվող տաքացնող շշերի շուրջ.

Որոնց մասին լսել եմ, երբ ծպտյալ թաքուն
Ականջալուր եմ եմ եղել մանուկ օրերի
Ծխախեղդ եղած մի բուռ սենյակի
Չափն անցած վեճերի ու գովեստների ժխորում,
Երբ թանկ հուշեր են դրվում սեղանին,
Ու ցավն արբել է պարպված շշերի մեջ:

Արևմուտքի գեղարվեստական մտածողության շրջանակներում ի հայտ են գալիս հայրենական տան պատկերները՝ ամբողջական ու կիսադեմ. «Կավե կճուճներ՝ պռոշը կոտրած, // Ու կորամեջք ծերեր ցնցոտիապատ», «Քրտինք ու հողի խառնուրդով ծեփված, // Հասած ծիրանի գոլությամբ բուրող // Մի գիշերվա մեջ ծերացող ջահել կանայք», «Արևախանձ հնձվորներ, կտուրներ կարկատված, // Խեղկատակի դեմքով արքաներ կարմիր, // Ու ձիեր՝ երբեք չպայտված»[2]*: Սա Հայաստանի բնաշխարհիկ ու հոգեաշխարհիկ մի պատկեր է՝ բնօրինակային արժեքով, երբեմն՝ սարյանական պայծառ ու նախնականորեն մաքուր գույներով, երբեմն՝ մթագնող գունապատկերներով: Հայրենիքի վերհուշի հետ թև է առնում նաև բանաստեղծուհու պատկերային մտածողությունը, անհատական են մակդիրները, փոխաբերություններն ու համեմատությունները՝ որպես պատկերավորության հիմնական միջոցներ, ինչպես՝*

Անցյալի ցավը, պռոշը ճաքած,
Առվի ջրի պես հեղեղվել է դուրս,
Խոստովանությունները, տասնամյակներ զսպված,
Հանձնվող զինվորների պես զինաթափվել են հլու….[3]*:*

2. Պոեզիայի մարգարեությունը կամ հայրենիքի ճակատագրի քրմուհին:

Հովհաննիսյանի պոեզիայում մարդու և հայրենիքի ոգեղեն ու օրգանական կապի, հոգևոր պատմության մեջ տեսլացող Հայաստանի պատմահոգեբանական պատկերներին զուգահեռ տիրականորեն առաջ են մղվում նաև նրա ներկա օրը, սպառնալիքներով ծանրացող գոյաբանական ընթացքը, զինաթափությունը լինելության մաքառումներում.

Հայրենիքս ձեռքից բաց թողնված հին գինու շիշ է,
Ու ես աչքերս փակ սոսկում եմ
Գահավիժումի մոտալուտի պատկերից իր….[4]*:*

---

[1]Նույն տեղում էջ 404:
[2]Նույն տեղում, էջ 407:
[3]Նույն տեղում էջ 408:
[4]Նույն տեղում էջ 387:

Այս և համանման այլ բանաստեղծություններում՝ գրված դեռ 2013-2018 թվականներին, բանաստեղծուհին դառնում է հայրենիքի ճակատագրի քրմուհի, ոգեղեն աչքերով պատկերագրում լինելիքը, ճակատագրով ու բախտով նախասահմանվածը:

Թ. Հովհաննիսյանի Հայաստանի պոեզիան և՛ մարգարեություն է, և՛ ոգեղեն հեռազգայություն, և՛ բանաստեղծի ու հայրենիքի օրգանական ամուր կապվածություն: Դա մերթ սիրուհու և հեռավոր սիրեցյալի կարոտալար է. «Երազներիս մեջ ես դու, Երկի՛ր իմ, // Կա՞ ինձանից մասնիկ մի աննշմար // Երազների մեջ քո…»[1]: Մերթ՝ երկվորյակային կապվածություն, մերթ՝ մոր ու զավակի կամ զավակի ու մոր պորտալարային շաղկապվածություն: Հայաստանի գալիքի տեսիլային պատկերները Հովհաննիսյանի պոեզիայում ասես զավակին սպառնացող մահվան մղձավանջից ցնցված վեր թռչող մոր կեսգիշերային երազներ լինեն՝ ասքային եղանակի փոխակերպված: Ահավասիկ մի պատկեր ևս, որ Հայաստանի ներկա իրավիճակի բնօրինակային տեսիլ է.

Հայրենիքս վեր նետված մանկան պես
Խաղացվում է օդում
Ու որսացող ապահովության ձեռքերն ամուր չեն
Ետ գրկելու համար….[2]:

Դարակազմիկ տագնապը հայրենի երկրի ապագայի հանդեպ գրեթե միշտ այս կամ այն չափով առկա է Թ. Հովհաննիսյանի պատմահայրենասիրական պոեզիայում: Բանաստեղծական տողերում տրոփում, թպրտում է զգայուն մի սիրտ՝ մտավախություններով ծանրաբեռ ճնշման ներքո: Ներքին լարվածությունն ու կանացի դողը հայրենի երկրի բախտի հանդեպ մշտապես փոխանցվում են իրար՝ փոխադարձաբար դառնալով առանցքային տարր.

Ես մտավախություն ունեմ,
Որ աշխարհի հիշողությունը
Արձանագրվում է առանց իմ տեսակի
Ներառման:[3]

Հովհաննիսյանի պոեզիայում Հայաստանի գոյաբանության ճանապարհի վրա կախված սպառնալիք է նաև ազգի՝ երկրի ներսում պահպանման և տեսակի տարածման խնդիրը, այլ կերպ ասած՝ հայության արտահոսքը, հիմքում սոցիալական հիմնապատճառներ ունեցող վերտադրողականության անկման միտումը: Բանաստեղծի ցավոտ բնորոշմամբ՝ իր հին ժողովրդի «…..Արգանդը ցամաքող երաշտահար դաշտ է// Կամ տեղահանված այգեստան // Առանց տնկիների».

Ու աղաղակն իմ կիսագնդից կիսագունդ
Որդեկորույս այրու թառանչ է՝ ծգված օդում
Հանգավոր երբեմն կամ անհանգ հաճախ….:

Բանաստեղծուհու աշխարհիկ շարականները այսպես հայտածում ու մորմոքում են Հայաստանի ճակատագրի կանխասացությունը՝ դառնալով Հայաստանի շուրջ և ներհայաստանյան քաղաքական արդի իրադարձությունների նախերգանքներ ու պատկերավոր նախօրինակներ: Այդտեղ և՛ հայրենիքի տերեր ինքնահռչակված սին ու

---

[1]Թ. Հովհաննիսյան, Լինելության համանվագ, Երևան, 2013, ՀԳՄ հրատ., էջ 343:
[2]Նույն տեղում էջ 385:
[3]Նույն տեղում էջ 387:

անարժան բախտախնդիրներն են, որոնք ժողովրդի անգիտակից թողտվությամբ շարունակում են անխնա կողոպտել երկիրը ու իշխել, և՛ արտաքին աշխարհաքաղաքականության անհոգի ու դիմակավոր տերերը, որոնց համար Հայաստանը մանրադրամ է մեծ խաղընթացներում: Գլուխգործոցային արժեք ունեցող ստեղծագործություն է «Մաշված աղոթք» բանաստեղծությունը՝ խոհափիլիսոփայության և արվեստի պատկերավորության առումով, որի ազդեցությունը եռապատկվում է մարգարեական արժանիքով:

Աղոթքը մաշվել է երկար ճանապարհներից, ինչպես ուխտագնաց հավատացյալների բոբիկ ոտքերն են մաշվում Երուսաղեմ տանող հեռաձիգ ուղիներից: Աղոթքի ճանապարհի երկարությունը փրկության որոնումների ապարդյունությունն է, գոյության բարձունքի անմատչելիությունը, խոսքի զորության կորուստը: Աշխարհաքաղաքական խաղացողների անսիրտ ու անմիտ սեղանների վրա Հայաստանը շրջանառվում է որպես մանրադրամ, ու նա, թյուրիմացաբար թե անճարակորեն, իր լինելության վերջին հույսը պահ է տվել նրանց, ովքեր կարող են իրեն անփութորեն, ստորակետի պես կցել սխալ տեղի, որոնց համար իր ներկայությունը չնշմարվող միջակետ է կամ շվայտորեն ծախսվող մանրադրամ.

Ես վախենում եմ, հայրենիք իմ,
Երբ քեզ վաճառում կամ հեշտ օտարում են մաս առ մաս,
Ու դու մատաղվում ես՝
Վերջին գոյության հույսը քո
Մանրադրամ դարձած, պատառ առ պատառ,
Տրվում նրանց, ում ափսեներում հսկա
Ներկայությունդ չի էլ երևում,
Կամ էլ կցվում է տեղի ինչ-որ անկապ՝
Սխալ օգտագործվող շաղկապումի նման,
Որ հեշտորեն կարող է փոխվել
Ստորակետի անփույթ
Կամ տողատները զատող միջակետի անկապ….

Սա Հայաստանին նվիրված հայ պոեզիայի արտաժայթքումներից է՝ էմոցիայի ու խոհի բարձրակետային համաձույլ վիճակ, Հայաստանի ապագայի բնօրինակային նախապատկեր: Բանաստեղծուհու խորազգա ու հեռաթափանց հայացքը պարզ տեսնում է աշխարհաքաղաքական գործընթացների ուղղվածությունն ու ողբերգական հետևանքները Հայաստանի համար.

Ես վախենում եմ, հայրենիք իմ,
Երբ լույսի պես չքացող դու մարմրում ես տեղ առ տեղ,
Շնչառությունը կորցնող,
Հանգչող ծնողի ժպիտի նման՝
Գիտակցության վերջին առկայծումները
Մեծահոգաբար սգացող որդիներին թողած…..:[1]

Բանաստեղծուհու աղոթքը՝ կասեցնելու հայրենիք-զավակի խաչելության ողբերգությունը, անզոր և իզուր է այլևս. Հայաստանն արդեն «խաչված հրաշք» է, իսկ ժողո-

[1]Նույն տեղում, էջ 395:

վուրդը՝ «տիեզերական բեռ»: Մաս առ մաս վաճառված ու օտարված Հայաստան, անհայրենիք ու թափառական ժողովուրդ, հուշ դարձած հայրենական տուն.

Ես վախենում եմ, հայրենիք իմ,
Հրաշք իմ խաչված,
Աղոթք իմ մաշված,
Որ առանց քեզ տիեզերական բեռ ենք դառնում ամենքս….[1]:

Հայաստանի ներկա պահի ողբերգական պատկերն է սա՝ տեսլացած պոեզիայով տարիներ առաջ: Հայաստանի զինաթափ-անպաշտպանությունը, անգլուխ-անղեկությունը, կրավորական-պարտվողական գոյավիճակը բանաստեղծության մեջ առերեսվում են աշխարհի՝ «հեգնանքը խնայած» անտարբերությանը.

Աշխարհի անցուդարձը խաղ, խորամանկ ու խարդախ,
Դու՝ անզրահ ասպետ, ձին՝ անհեծյալ, անսանձ,
Որն իր վերջին շունչն է ճոճում դաշույնի տեղ,
Ու աշխարհն անտարբեր, հեգնանքը խնայած,
Շրջանցելիս անգամ չի նկատում էլ քեզ…..[2]

Կորսվող Հայաստան-մարմնից հետո լինելության վերջին հույս է դառնում Հայաստան-հոգու փրկությունը: Բանաստեղծուհու խոսքը հնչում է որպես որդեկորույս մի նոր Մարիամի աղերս-հրահանգ, նախասահմանությանը դիմադարձող պոետական հրաշափառություն կամ քրիստոսաբար պայծառակերպություն.

Արդ, դաշույնի տեղակ լեզուդ հազարաշեղջ,
Փայլատակի՛ր, ճչա՛ կոչ ու գոչով հպարտ,
Հոգի՛դ փրկիր, երկի՛ր, հոգիդ հազարամյա…. [3]

Հայաստանը՝ որպես հարափոփոխ ու բազմադիմակ աշխարհի քաղաքական հանդեսներում քայլող անդիմակ մաքրություն ու հազվագյուտ թանկություն, որպես երկրային կյանքի վրա տարածվող երկնային մանանա՝ գիշատիչների բաց երախին հանդիման, որպես որբ մանուկ ու մտահոգ ծնող, որպես կորուսյալ մարմինը որոնող անմարմին հոգի: Հակադրությունների տաճարում աղոթասացող բանաստեղծուհին նվիրյալ զինվորի պես պատրաստ է զոհաբերել իրեն, միայն թե կայանա հայրենի երկրի փրկության աղոթքը.

Հայրենիք իմ,
Մշուշոտ տեսլախաբություն իմ հեռու,
Սրտի տրոփ՝ իմ կրծքի տակ,
Ես քո մատաղն եմ չմորթված,
Դու երազանքն իմ բաղձալի՝
Այս երկդեմ աշխարհի այս ու այն կողմերում
Հակինթի պես արգելված….[4]:

Հաջորդում է Ապրիլյան քառօրյա պատերազմի խոհապատկերը՝ բեկված ցավախառն մտածումներով ու կորուստների անսիրտ պոռթկումով: Դա նաև 44-օրյա պատերազմի նախօրինակն ու նախերգանքն է՝ պատմական ու պոետական համահար-

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում, էջ 394:

թակներում: Հայրենիքը անառակ ու անհոգի որդիներից կողոպտված ծնող է, ու արժանավոր, ընտիր սերուցքը նրա ստիպված իր կյանքն է զոհաբերում՝ փրկելով մեր ազգային «հպարտության խաբկանքը» և երկրի՝ իրենց «տարեկից անկախությունը»: Մի կողմից անարժանների արյունոտ խնջույք, հայրենիքի անխնա կողոպուտ և զինաթափություն՝ լինելության ճակատամարտերին դեմ հանդիման, մյուս կողմից՝ արժանավորների մաքառում ու ինքնազոհաբերություն. ահա մեր ազգային ողբերգության պարունակներից մեկը ևս, որ ներկայանում է որպես ճակատագրի հեգնանք.

Հայրենիքը, որին պահ էինք տվել որդիներին մեր,
Թալանված ծնող էր կամ այր՝ ծակ գրպանով,
Կամ թալանված ծառ, որի սնանկությունը հանկարծ
Տեսանելի դարձավ լուսաբացին,
Երբ դեռ իր կարգին չառնականացած ճյուղերը մատղաշ
Իրենց դիերով փրկեցին հպարտության խաբկանքը մեր,
Որը հազիվ տարեկից էր իրենց,
Ու անկախությունը, մուրացիկի պես մերկ,
Կախվեց ի տես բոլորի՝ օդում[1]*:*

Խոհապատկերային բացառիկ ինքնարտահայտում է նաև «Անմիտ խզբզուք» բանաստեղծությունը: Անմիտ խզբզուք, այսինքն՝ ապարդյուն ճիգ, անարդյունք լարում, ընթացք չբեկող միտք, նոր սկիզբ չարարող բան: Բանաստեղծությունը Հայաստանի պատմության գեղարվեստական խտացում է, որի յուրաքանչյուր տուն ժողովրդի պատմության մի փուլ է՝ բազմաբևեռ տարողությամբ ու բազմասևեռ հայացքով: Բանաստեղծուհու սիրտը աշխարհի անցուդարձի մայրուղի է, աշխարհաքաղաքական գործընթացների կոխան, հայրենիքի գլխին առկախ տագնապների մշտամնա կայան.

Ինձ իմ բախտից զատ, գուցե և ավելի,
Իմ հայրենական տան բախտն է տագնապեցնում,
Խախտվել են կարծես սյուները երբեմնի
Ու անտեր թողել մի ողջ ժողովուրդ….[2] *:*

Արտաքին սպառնալիքներին դեմ հանդիման ուրվապատկերվում են ներքին մարտահրավերները՝ քաղաքների բևեռացումն ու դատարկվող գյուղերի թշվառությունը՝ տխուր ու հուսալքող հետևանքներով.

Տունն իմ հայրենական բևեռվել-խտացվել է
Թզաչափ վարդագույն մայր քաղաքի վրա,
Այնտեղ գյուղացին եկվոր է
Ու ապրում է տուփում ցեմենտե վարձակալված;
Մայրաքաղաքցին հին ցավոտ համառությամբ
Փորձում է դեռ իրեն իր տանը պահել,
Գրավի է դրվել կեցության նավն իր,
Ու ինքն իր տան մեջ արդեն կենվոր է….[3]*:*

---

[1]Նույն տեղում,էջ 397:
[2]Նույն տեղում,էջ 399:
[3]Նույն տեղում, էջ 399:

Գումարվում է հայրենաբնակների արտահոսքի սպառնալիքը՝ տարագիրների ներհոսքի փոխարեն: Գյուղ առ գյուղ, քաղաք առ քաղաք նոսրացող ու դատարկվող հայրենիք, տարագնացող ժողովուրդ, որ հետ չի նայելու, ու երկիրը դառնալու է «չայցելված սրբատեղի»: Եվ այդ ավերակների վրա պիտի թագավորեն անտիրակալ արքաները՝ «ինքնահռչակ» ու սին, իրենց անխոհեմ ու անստույգ, հոռի կառավարման և ոչնչատեսիլ քաղաքականության արդյունքը ժառանգելու.

Սրբատեղի է լինելու չայցելված
Երկիրն իմ, թե եղածը արտահորդի այդպես,
Ես չգիտեմ, թե ում են տիրակալելու
Արքաներն ինքնահռչակ ռամիկների պես:

Սա մեր օրերի անմխիթար պատկերն է, սթափության վերջին մի ճիչ՝ գրված 2018-ին՝ ժողովրդի պատմության բեկումնային օրերին:

Տնտեսապես կեղեքված, բարոյապես հուսալքված, զորապես ուժասպառված երկրի դժբախտության գլխավոր հեղինակները Թ. Հովհաննիսյանի տողերի ենթատեքստում հայրենի երկրի՝ անհոգի ու անգաղափար վաշխառու դարձած գահակիր զավակներն են, և երկիրը՝ քաղցկեղի բարձիթողի ճիրաններում գտնվող կարեվեր ծնողի պես, իր գոյության հույսը դրել է դարձյալ անհուսալի Աստծո վրա: Առաքինիների ու նվիրյալների փրկության պայքարն էլ այս դեպքում անզոր է, ուշացած, քանի որ արդեն «Ավա՛ղ, երկիրն իմ արգանդ է ծակված»: Նշտարով խոցված արգանդից հոսող արյան պես սերնդապարպվում է հայրենի հողը, արտահորդում է երկրի ուժը՝ «Ուրիշի օջախները շենացնելու դատապարտված».

Իմ ժողովրդի առնականությունը երբեմնի
Ասքերի մեջ ծանծրանում է չընթերցված,
Մինչդեռ պարպված գյուղերի եզրերից
Պատվաբեր ու ցասկոտ մեռյալները ննջած
Ուրվականների պես ելումուտ են անում
Ու հսկում կիսափուլ տները լքված….
Իշխանական անտարբերության մատնված
Երկիրն իմ ցամաքում է ամառվա առվի պես,
Որ հույս ունի դեռ լցվելու գարնանը:[1]

Պատկերների շարքը ծավալվում ու հույզերի նոր մրրիկ է հարուցում: Երկրի դատարկումն ամբողջանում է արտաքին ու ներքին երևույթներով ու հատկանիշներով: Ֆիզիկական ու նյութական պարպումներին համալրվում է հոգևոր պարպումը, երկրի ավերին ու ավարին ավելանում են հոգևոր արժեքների անկումն ու անհետացումը: Ապամշակույթը դառնում է օրվա շքահանդես, կյանքի տոնավաճառ, մշակութային առուծախի մեջ աճուրդի է հանվում ամեն ինչ՝ ճաշակ ու խիղճ, ինքնություն և փառք.

Մշակույթը երկրիս արգանդն է պարպվող՝
Արհեստական բեղմնավորումից հոգնած,
Վախենում եմ հոգեքաղցից երկիրն իմ համբարձվի,
Եթե չդադարի այս էժան առուծախը[2]*:*

---

[1]Նույն տեղում, էջ 400
[2]Նույն տեղում, էջ 401:

Հայաստանն ամեն ինչ է Թամար Հովհաննիսյանի համար, բայց ամենից առաջ՝ վտանգից առաջ բազմապատկվող սեր և կորուստին դեմ հանդիման բազմապատիկ թանկ դարձող գոյություն, «ցամաքող առու» կամ «եզրախանձ հաց» կամ փոքրացող կտավ՝ «կորուստներով հին ու նոր»: Տերյանական մեղմ ու վիատ, պայծառահուշ տրամադրություններով, բայց ինքնատեսակ գեղարվեստական ոճով ու հանգով նոր-օրյա խոստովանություն է «Սիրում եմ երկիրն իմ՝ հաց արևախանձ….» սկզբնատողով բանաստեղծությունը: Տերյանի «Երկիր Նաիրի»-ից և Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի….»-ից սերված ու կերպարանափոխված, անհատական կնիքով զմռսված մի նոր գլուխգործոց է սա՝ կանացի հյուսվածքով: Այնտեղ՝ Չարենցի բանաստեղծության մեջ՝ «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում», այստեղ՝ Թամար Հովհաննիսյանի տաղում՝ «Սիրում եմ երկիրն իմ՝ հաց արևախանձ»: Այնտեղ՝ Տերյանի «Երկիր Նաիրի» շարքում՝ «Մշուշի միջից տեսիլ դյութական», իսկ այստեղ՝ «Ու տեսլականի տարածքներն անհուն»: Տերյանական նրբաթախիծ քնարականությունն ու Չարենցի պատմափիլիսոփայական հայացքը երբեմն՝ կամա-ակամա, հայտնվում ու անմիջապես չքանում են Հովհաննիսյանի հայրենասիրական պոեզիայում՝ հաջորդ պահին դառնալով նոր մտածողություն ու նոր ոճ.

Սիրում եմ երկիրն իմ՝ հաց եզրախանձ,
Շուրթը ցամաքած կարճ առվի հուն,
Սիրում եմ եզրագծերի կորությունները նրա
Ու տեսլականի տարածքներն անհուն:
Երազն ու երևույթը իրար խառնած՝
Ոգեղենության օրրան է երկիրն իմ,
Երկիրն իմ հսկա էր հնօրյա հուշերում
Ու մի թիզ կտավ՝
Եզրերը պատռված նորոգ օրերում,
Ու եղածի համար իսկ սիրտս է դողում…. [1]:

Հայաստանի բնաշխարհիկ ու հոգեաշխարհիկ դիմապատկերներին աստիճանաբար հայտնվում են քաղաքական ճակատագրի ցավից ծնված ակոսներ ու ստվերներ.

Իմ երկրի հպարտությունն իր պատմությունն է,
Ու մտահոգությունն իր՝ խճճված ներկան,
Կա, դեռ մնում է քարտեզին աշխարհի
Աստծո ձեռքից ընկած հակինթի նման….[2]:

Հայրենիքի ճակատագրի խոհափիլիսոփայական բարձրակետերից է շարքի վերջին բանաստեղծությունը՝ «Չվճարված պահապան»: Դա ժամանակի քմահաճույքին զոհ դարձող հայրենի երկրից սկիզբ առած խոհաքննական ու պատկերային հանդուգն ու նորարար արտաժայթքում է, աշխարհաքաղաքական արշավներին դեմ-հանդիման գինաթափ կանգնած հայրենի երկրի զոհաբերման ցավի ու ինքնախարազանումի երգը.

Անցյալի ու ներկայի խոյակռվից տագնապած՝
Հապաղումով ոտքը կախ է գցում ապագան,

[1]Նույն տեղում,էջ 402
[2]Նույն տեղում, էջ 403:

Կարծես մտորում է, թե արժե՞ ունենալ
Իր տարածքներում ժողովուրդն այս
Կրքոտ, կռվարար, շինարար ու հազարճարտար,
Բայց նաև մուրացիկ, ողբասաց ու լալկան….
Երկիրս արագ ծախսվող վարկ է,
Որը չի փարատում հոգսերը վերցնողի,
Երկրիս գոյությունը պարտք վերցրած կյանք է,
Որ ոչ պարտատիրոջն է պետք, ոչ պարտատուին….[1]*:*

Եզրակացություն

Թամար Հովհաննիսյանի պոեզիան Հայաստանի պատմահոգեբանության՝ ներկա ժամանակի գիրքն է՝ օծված աստվածային առանձնահատուկ շնորհներով: Այն նաև Հայաստանի գալիքի մարգարեության գիրքն է, հեթանոսական տաճարում ծնրադրած քրմուհու՝ կրակի քուրայի մեջ անդրադարձվող հայրենիքի ճակատագրի վերծանման տագնապալի ողբերգը՝ ուղղված ժամանակներին: Դա տարիքի հետ հասակ առած և իմաստնացած սիրո հայացք է, ամեն պահի վերարժևորվող մասունք ու աներկրորդ սրբություն:

Թամար Հովհաննիսյանի՝ դասական արժեք ունեցող առանձին բանաստեղծություններ վստահաբար կարող են դասվել հայ հայրենասիրական պոեզիայի ընտրանու շարքերում:

РЕЗЮМЕ

ИСТОРИКО-ПСИХОЛОГИЧЕСКИЙ ОБРАЗ АРМЕНИИ В ПОЭЗИИ ТАМАР ОВАННИСЯН

Оганесян Нарине

Арцахский государственный институт,
Преподаватель кафедры литературы
к. ф. н., доцент
Степанакерт, Республика Арцах

В статье исследование ведется по двум основным направлениям: незапечатанные письма изгнанной души, адресованные четырем сторонам света, и пророчество поэзии или жрица судьбы родины. Армения как мир исторический и мир духовный, геополитический конфликт и христианская судьба, как бунт против времени и раздвоенная жертва, последняя станция спасения духа, в поэзии Тамар Ованнисян предстает с новыми чертами и восприятием.

Параллельно с духовно-органической связью человека и Родины, историко-психологическим образом Армении в поэзии Ованнисян выдвигается ее сегодняшний день, онтологический процесс, отягощенный угрозами, разоружение в борьбе за бытие.

Поэзия Т. Ованнисян – это исповедь исторической психологии Армении и пророчество будущего, помазанное божественной благодатью.

Ключевые слова: Армения, историческая психология, единство человека и Родины, пророчество, геополитика, христианская судьба, потери, угроза исчезновения.

---

[1] Նույն տեղում, էջ 410:

SUMMARY

THE HISTORICAL AND PSYCHOLOGICAL IMAGE OF ARMENIA IN TAMAR HOVHANNISYAN'S POETRY

Hovhannisyan Narine

Artsakh State University, PhD in Philology, Associate Professor

Stepanakert, Republic of Artsakh

In the article, research is carried out in two main directions: unsealed letters of an exiled soul addressed to the four cardinal directions, and the prophecy of poetry or the priestess of the motherland's fate. In Tamar Hovhannisyan's poetry, Armenia as a historical and spiritual world, geopolitical conflict and Christian destiny, as a rebellion against time and a victim, the last station of salvation of the spirit, appears with new features and a new perception.

Alongside the spiritual and organic connection between a person and the Motherland, the historical and psychological image of Armenia, the latter's present day, and the ontological process burdened with threats, its disarmament in the struggle for being, are put forwardin Hovhannisyan's art.

T. Hovhannisyan's poetry is the book of confession of the historical psychology of Armenia and a prophecy of its future, anointed with divine grace.

Key words: Armenia, historical psychology, unity of aperson and the Motherland, prophecy, geopolitics, Christian destiny, losses, threat of extinction.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հովհաննիսյան Թ., Լինելության համանվագ, Երևան, 2013, ՀԳՄ հրատ.:
2. Հովհաննիսյան Թ., Տարիքի հոգին, Երևան, 2018, «Անտարես» հրատ. :